«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2009

Մարտի 24. 2010
3/24/2010

Բովանդակություն

1. Նախաբան 3
2. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հիմնում 4
3. Հիմնադրամի գործունեություն 5
3.1 Ոլորտի ուսումնասիրություն 5
3.2 Մշակումներ 6
3.3 Համագործակցություն շահեկիցների հետ 8
3.4 Միջազգային համագործակցություն 8
3.5 Հրապարակայնության ապահովում 9

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»

հիմնադրամի 2009 թվականի գործունեության

1. Նախաբան

Համաշխարհայնացման իրողության պայմաններում մրցունակություն ապահովելու ու համաշխարհային տնտեսության զարգացումներին համաքայլ ընթանալու նպատակով ինտելեկտուալ բարձր մակարդակ ունեցող հասարակության ձևավորումն ու գիտելիքահենք տնտեսության զարգացումը մեր պետական քաղաքականության առանցքային ուղղություններից են։

Մասնագիտական կրթության ոլորտում նախանշված նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել լայնածավալ բարեփոխությունների, որոնք ուղղված են ինչպես համակարգի ներքին առողջացմանը, այնպես էլ՝ միջազգայնացմանը։ Ղեկավարվելով նաև ՀՀ օրենսդրությունից բխող պահանջով՝ մասնավորապես, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, որի համաձայն միջազգային կրթական համակարգում ինտեգրումը կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից մեկն է, Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես միացել է եվրոպական տարածաշրջանում ընթացող մի շարք գործընթացների։

2005 թվականին ստորագրելով Բոլոնիայի հռչակագիրը՝ Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է Եվրոպական կրթական միասնական տարածքի ձևավորման գործընթացին։ Այդ հռչակագրի համաձայն, գործընթացի անդամ երկրները պետք է ստեղծեն մասնագիտական կրթության որակի հավաստման ազգային համակարգ՝ եվրոպական երկրների հետ համադրելի չափանիշներով։

2. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հիմնում

Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական ուսումնական հաստատություններում իրականացվող գործընթացների համակարգման, կրթության որակի բարելավմանն ուղղված քայլերի խթանման և որակի արտաքին հավաստման համակարգի ձևավորման ու գործարկման նպատակով, 2008 թվականի նոյեմբեր 27-ին ՀՀ Կառավարության N 1486 որոշմամբ, ստեղծվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ), հաստատվել է կանոնադրությունը: Ծառայության ստեղծումը նախատեսված է եղել նաև ՀՀ կառավարության 02.11.2006թ. թիվ 43 մաս 41 «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածով: Ըստ այդմ՝ Որակի ապահովման ազգային ծառայությունն իր հերթին պետք է անդամակցի Որակի ապահովման Եվրոպական ցանցին (Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Ասոցիացիա, ENQA):

Կանոնադրական նպատակներն իրականացնելու համար, որոնք են մասնագիտական կրթության ոլորտում ուսումնասիրությունները, վերլուծությունները, խորհրդատվությունը և գնահատումը, ինչպեսև նախնական, միջին ու բարձրագույն մասնագիտական կրթության հավատարմագրման փորձաքննության իրականացումը, ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության՝Երևանի Օրբելու N 22 հասցեում գտնվող շենքի 346 քմ մակերեսով տարածքը (9-րդ հարկ) ամրացվել է հիմնադրամին՝ անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով:

Հիմնադրամին գումար հատկացնելու համար՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2008 թվականի չորրորդ եռամսյակում Կրթության և գիտության նախարարությանը հատկացվել է 65619.5 հազ. դրամ:

2008 թվականի դեկտեմբերի 24-ին հիմնադրամը, որպես իրավաբանական անձ, գրանցվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում (գրանցման վկայական N 03 Ա 083818):

Կանոնադրությամբ ամրագրվել են հիմնադրամի մարմինները. կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը՝ հոգաբարձուների խորհուրդը և ընթացիկ գործունեությունը ղեկավարող կառավարիչը՝տնօրենը:

2009 թվականի մարտի 9-ին տեղի է ունեցել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը, որտեղ հաստատվել է հիմնադրամի տնօրենի ընտրության ընթացակարգը, ինչպես նաև հիմնադրամի վարչակազմակերպչական կառուցվածքը:

2009 թվականի մարտի 31-ին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի երկրորդ նիստի ընթացքում անցկացված ընտրության արդյունքում 4 տարի ժամկետով հիմնադրամի տնօրեն է ընտրվել Ռուբեն Թոփչյանը:

3. Հիմնադրամի գործունեություն

Հիմնադրամին պետական աջակցություն տրամադրելու վերաբերյալ մշակվել և ստորագրվել է համապատասխան պայմանագիր, ձևավորվել է աշխատակազմ ու հիմնադրամի աշխատողների հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Մշակվել ու ՀՀ կրթության և գիտության նախարարության քննարկմանն է ներկայացվել հիմնադրամի տնօրենի ընտրության ընթացակարգն ու տնօրենի թեկնածուին ներկայացվող պահանջները, մշակվել և հաստատվել են հիմնադրամի ներքին կարգապահական կանոնները: Հիմնադրամն իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով հստակեցրել է գործունեության ռազմավարությունը, կազմել՝ տարեկան ծրագիրը: Ըստ այդմ, որպես առաջնային խնդիրներ սահմանվել են և գործունեության առաջին տարում աշխատանքներ են իրականացվել հետևյալ ուղղություններով՝ **ՀՀ մասնագիտական կրթական ոլորտում որակի ապահովման առումով առկա վիճակի ու համապատասխան օրենսդրական դաշտի ուսումնասիրություն, միջազգային փորձի ուսումնասիրություն և համագործակցություն, որակի ապահովման նոր համակարգի ներդրման և զարգացման հնարավոր ուղիների վերլուծություն, փաստաթղթերի մշակում, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում:**

Իրականացվել են նաև ներքինն կազմակերպչական աշխատանքներ. ստեղծվել է համակարգչային ներքին ցանց, այն տեղադրվել է կենտրոնակայանի (սերվերի) վրա և շահագործվել է, տեղադրվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կենտրոնացված համակարգ:

3.1 Ոլորտի ուսումնասիրություն

Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրել է մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացները և դրանք կանոնակարգող փաստաթղթերը՝

- նախկին հավատարմագրման գործընթացների արդյունքները, ընթացակարգերը, չափորոշիչները, և չափանիշները,
- Որակավորումների ազգային շրջանակը,
- ԵՊՀ, ՀՊՃՀ, ԵՊԲՀ, ՎՊՄԻ կողմից մշակված որակի ապահովման ներքին համակարգի ներդրման ու գործարկման ուղղությամբ իրականացված քայլերը,

- մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների, մասնավորապես, ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի իրականացման ընթացքը:

Ուսումնասիրվել ու վեր են հանվել որակի ապահովման նոր համակարգի ներդրմանն ու այդ առումով հիմնադրամի գործունեությանը խոչընդոտող օրենսդրական խնդիրները: Դրանց վերացման նպատակով օրենսդրության մեջ առկա բացերի լրացման, թերությունների վերացման, անորոշությունների հստակեցման առաջարկով՝ ըստ հասցեատերերի, ուղարկվել են համապատասխան առաջարկություններ և նամակ-գրություններ: Հիմնադրամի գործունեությանն առնչվող օրենսդրական դաշտի կարգավորման նպատակով կատարվել են համապատասխան առաջարկություններ՝ կանոնադրական փոփոխությունների, հավատարմագրման կարգի և օրենսդրության այլ դրույթների վերաբերյալ:

Միջազգային փորձին ծանոթանալու նպատակով ուսումնասիրվել է որակի ապահովման ասպարեզում մի շարք այնպիսի երկրների փորձը, ինչպիսիք են՝ Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, Դանիան, Իսպանիան, Բուլղարիան, Լեհաստանը և այլն: Նրանց համապատասխան կառույցների գործունեությանը ծանոթանալու և համագործակցություն սկսելու նպատակով կազմակերպվել են այցելություններ՝ Մեծ Բրիտանիա, Լեհաստան, Դանիա, Նիդերլանդներ, Իսպանիա, Գերմանիա:

3.2 Մշակումներ

Նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հատատություններում որակի արտաքին ապահոման համակարգի ներդրման և գործարկման, ինչպես նաև որակի ապահովման ազգային համակարգի ձևավորման նպատակով, հաշվի առնելով Որակի ապահոման եվրոպական ցանցի (ENQA) մշակած «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները» և Հավատարմագրման եվրոպական ասոցիացիայի (EAA) կողմից ընդունված լավագույն փորձը, մշակվել են փաստաթղթային մի շարք փաթեթներ ու մեկնարկել՝ գործընթացներ: Մասնավորապես՝

- հանրապետության մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բազա ձևավորելու նպատակով մշակվել ու գործարկվել է էլեկտրոնային հարցաշարի առաջին և երկրորդ մասերը՝ բուհերի համար, նախապատրաստվել է նաև նույն հարցաշարը նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար: Գործարկված հարցաշարերի տվյալների հիման

վրա իրականացվել են վերլուծություններ՝ որակի ապահովման տեսանկյունից մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության ուժեղ և թույլ կողմերն ի հայտ բերելու նպատակով:

- Հիմնվելով որակի ապահովման ASIIN գերմանական գործակալության փորձի ուսումնասիրության վրա, մշակվել է կրթական ծրագրի գնահատման օրինակելի մոդել:
- Մշակվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ՈԱԱԿ մոտեցումները՝ առաջնորդող գաղափարներ» փաթեթը, որտեղ ներկայացված են Հայաստանում կրթության որակի ապահովման նոր համակարգի ներդման հիմնական սկզբունքները և հավատարմագրման անցումային փուլում խնդիրների լուծման հնարավոր ուղիները:
- Մշակվել են «ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգի», «Որակի արտաքին ապահովման մեխանիզմների», «Հավատարմագրման քաղաքականության և ընթացակարգի», «Հավատարմագրման չափորոշիչների և չափանիշների», «Նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների և դրանց մասնագիտությունների ուսումնական գործունեության արտաքին գնահատում» մեթոդական ցուցումների, «Բուհերի ռազմավարության գնահատման մեթոդաբանության», «Աուդիտի կազմակերպման ընթացակարգի և ընթացակարգի սխեմայի», «Աուդիտի անցկացման կառուցվածքային սխեման և գործիքամիջոցներ», «Ինստիտուցիոնալ աուդիտի կառուցվածքը և նպատակները», «Փորձաքննության քաղաքականություն և ընթացակարգեր» ձեռնարկի նախագծերը:
- Մշակվել են հավատարմագրման համար անհրաժեշտ պաշտոնական փաստաթղթերի՝ հավատարմագրման դիմում-հայտի և հավատարմագրման վերաբերյալ պայմանագրի, ինքնավերլուծության, փորձագետների զեկույցի, դրա վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ ներկայացնելու, հավատարմագրման հանձնաժողովի հավատարմագրման զեկույցի, այն հաստատող որոշման, ՈԱԱԿ վերջնական զեկույցի և ուսումնական հաստատության կողմից բողոքարկում ներկայացնելու, փորձագետների խմբի կազմը հաստատելու ձևաչափերը:
- Մշակվել են հավատարմագրման հանձնաժողովի և փորձագիտական խմբերի կազմի, փորձագետների որակավորումների, էթիկայի կանոնների, նրանց ընտրության չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերը:
- Մեկնարկվել է փորձագետների բազայի ձևավորման գործընթացը, ինչի համար ստեղծվել է ինտերնետային կայքի նախնական տարբերակը, փորձագետների հավաքագրման համար ՈԱԱԿ հարցաշարում բացվել և սկսվել է գործարկվել նախնական տվյալների հավաքման բաժինը:

- Կենտրոնի մասնագետներն ընդգրկվել են ՀՀ ԿԳ նախարարության աշխատանքային խմբում և համատեղ մշակել կրթության բնագավառում հավատարմագրման գործընթացի իրավական կարգավորման բարեփոխումների հայեցակարգի նախագիծը:

3.3 Համագործակցություն շահեկիցների հետ

Հիմնադրամը լայնորեն համագործակցել է բոլոր շահեկիցների հետ:

- Հիմնադրամի մասնագետները մասնակցել են ԿԳՆ-ում, բուհերում և գործընկեր այլ կազմակերպություններում որակի ապահովման հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներին, գիտաժողովներին և «Որակի ապահովման ներքին համակարգի շրջանակային մոդել՝ միջբուհական կոնսորցիումի օրինակով» նախագծի շրջանակներում կազմակերպված աշխատաժողովին, «Օտարերկրյա որակավորումների ճանաչում, Լիսաբոնի կոնվենցիա, լավագույն փորձառության օրինակներ» համաժողովին և այլն:
- Մշակված հարցաշարի գործարկման նպատակով, ինչպես նաև համակարգի հիմնախնդիրներին ծանոթանալու և համագործակցության եզրերն ընդլայնելու, վերոնշյալ հարցաշարի վերլուծությունների արդյունքները քննարկելու նպատակով հիմնադրամում կազմակերպվել են հանդիպումներ պետական ու ոչ պետական բուհերի ռեկտորների, որակի պատասխանատուների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, մեր երկրում որակի ապահովման ասպարեզում գործունեություն ծավալող փորձագետների հետ:

3.4 Միջազգային համագործակցություն

Հիմնադրամի միջազգայնացումը և ճանաչումն ապահովելու նպատակով նախաձեռնվել են հետևյալ քայլերը՝

- Հիմնադրամը հաստատել է հարաբերություններ Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի, ENQA-ի հետ ու լայնորեն համագործակցել որակի ապահովման եվրոպական մյուս երկրների կենտրոնների հետ, ինչի արդյունքում Հիմնադրամին շնորհվել է ENQA-ի նախնական անդամակցության կարգավիճակ: Դրա շնորհիվ ՈԱԱԿ-ը կներգրավվի որակի ապահովման ոլորտի միջազգային նախաձեռնություններում և մշակումներում:

- Լեհաստան այցի արդյունքում Լեհաստանի Հավատարմագրման հանձնաժողովի հետ կնքվել է պայմանագիր:
- Գերմանիա այցի արդյունքում որակի ապահովման ASIIN գործակալության հետ կնքվել է պայմանագիր:
- Հիմնադրամի ներկայացուցիչները մասնակցել են նաև միջազգային համաժողովների և Կոպենհագենում անցկացվող Որակի ապահովման եվրոպական ֆորումի (EQAF) աշխատաժողովին:
- Հիմնադրամում կազմակերպվել են հանդիպումներ միջազգային հայտնի փորձագետների՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) նախագահ Բ. Կուրվալեի, Թուրինի Պոլիտեխնիկական համալսարանի որակի, զարգացման և հավատարմագրման գծով պրոռեկտոր Մ. Մ. Գոլայի, Մեծ Բրիտանիայի Միդլսեքս համալսարանի որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գեորգեադուի հետ:
- Միջազգային համագործակցության շրջանակներն ընդլայնելու նպատակով կենտրոնը հայտ է ներկայացրել ՏԵՄՊՈՒՍ-ի դրամաշնորհային 20 ծրագրի մասնակցելու համար: Դրանցից 4-ը (ARARAT, PICQA, DIUSAS, INURE) մշակվել են հիմնադրամի կողմից.
- Մշակվել է առաջարկ TWINNING դրամաշնորհային ծրագրին մասնակցելու համար:
- Հիմնադրամը մասնակցում է նաև TEMPUSI-ի ECESIS ծրագրին, որի արդյունքում հնարավորություններ են ստեղծվել անձնակազմի վերապատրաստման համար:

3.5 Հրապարակայնության ապահովում

Հիմնադրամի գործունեության հրապարակայնության ու թափանցիկության ապահովման, ինչպես նաև մասնագիտական կրթական համակարգում որակի ապահովման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով՝

- մշակվել է ՈԱԱԿ պաշտոնական կայքի կառուցվածքը և բովանդակությունը: Նախնական տարբերակով սկսվել է գործարկվել www.anqa.am պաշտոնական կայքը, որի միջոցով պարբերաբար տեղեկատվություն է տարածվել կենտրոնի գործունեության վերաբերյալ:
- Կենտրոնի գործունեության հրապարակայնությունն ապահովելու համար հարցազրույցների և լուրերի ձևով տեղեկատվություն է փոխանցվել նաև ԶԼՄ-ների միջոցներով:
- Մշակվել են տեղեկատվական նյութեր՝ բուկլետ, բրոշյուր:

- Հիմնադրամը մշակվել է նաև հանրային հանդիպում-քննարկումների կազմակերպման մոտեցումները՝ ըստ շահեկիցների խմբերի։
- Կենտրոնի ճանաչելիության ապահովման նպատակով մշակվել են կորպորատիվ ոճի տարրերը, և հաստատվել է լոգոն՝ անգլերեն և հայերեն տարբերակներով, ըստ այդմ՝ պատրաստվել են բաներներ և կիրառվել ճանաչելիությունն ապահովող այլ միջոցներ։